ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07-ը հունիսի 2021 թ.N 155

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Կարինե Ավագյանի և Մանե Մարգարյանի դիմումը՝ իրենց կառուցապատման իրավունքով պատկանող հողամասի պայմանագիրը լուծելու մասին՝ ***որոշում եմ.***

1. Վաղաժամկետ լուծել Հայկ Վախթանգի և Մանե Վախթանգի Մարգարյանների հետ կնքված Ա. Իսահակյան փողոցի թիվ 2/32 հասցեի /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 03062021-07-0203, տրված 03.06.2021 թ./ 0.002 հա ընդհանուր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կառուցապատման պայմանագիրը:

2. Լիազորել Նոր Հաճնի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերով գլխավոր մասնագետ Գրիգոր Հալլաբյանին սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կառուցապատման պայմանագիրը լուծելու համար հանդես գալու Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակում:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07-ը հունիսի 2021թ. N 156
Նոր Հաճն

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի ***որոշում եմ*** .

Նազիկ Գագիկի Մադոյանին սեփականության իրավունքով պատկանող, 0.08 հա ընդհանուր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը հասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝

- Նոր Հաճն համայնք, Հարավարևելյան թաղամաս, 14-րդ փողոց թիվ 26 հողամաս:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 Հունիսի 2021 թվականի N 157

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետի և 17-րդ հոդվածի 1-ին պարբերության պահանջներով *որոշում եմ.*

1. 2021 թվականի հունիսի 08-ին հրավիրել Նո րՀաճն ավագանու արտահերթ նիստ:

2.Արտահերթ նիստի օրակարգում ընդգրկել հետևյալհարցերը՝

2.1 <<Նոր Հաճն համայնքի պատվավոր քաղքացի>> կոչումը շնորհելու մասին:

2.2 Նոր Հաճն համայնքում տեղական տուրքեր և (կամ) վճարներ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին:

2.3 Համայնքային սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքե պետությանը փոխանցելու մասին:

2.4 Նոր Հաճն համայնքում վարչական վերահսկողության իրականացման արդյունքների քննարկման մասին:

2.5 Նոր Հաճն համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդ – վաճարքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին:

2.6 Սուբվենցիոն հայտին հավանություն տալու մասին:

2.7 Նոր Հաճն համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28- ի N 62- Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արման Սմբատյանին կազմակերպել և ապահովել արտահերթ նիստի անցկացումը:

Համայնքի ղեկավար՝ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2021թ.հունիսի 07
ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՍՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2021 թվականի N 158

ՎՐԵԺ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՎ ԳԱՅԱՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, հիմք ընդունելով Նոր Հաճն համայնքի Իսահակյան փողոցի 6-րդ շենքի 9-րդ բնակարանի բնակիչներ՝ Վրեժ Գրիգորյանի և Գայանե Աղաջանյանի դիմումը, իրենց անչափահաս երեխաների՝ Նարինե /ծնված՝ 13.05.2009թ./, և Ժորժ /ծնված՝ 08.11.2012թ./ Վրեժի Գրիգորյանների անվամբ հիպոթեքով ձեռք բերվող Նոր Հաճն համայնքի Պարգևաշեն 4-րդ թաղամասի 1-ին փողոցի 11/1 հասցեում գտնվող անշարժ գույքը գրավադրելու թույլտվություն տալու մասին, հաշվի առնելով համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 08-ի թիվ 04 նիստի արձանագրությունը, **որոշում եմ.**

1. Թույլատրել Վրեժ Գրիգորյանին և Գայանե Աղաջանյանին, որպես անչափահասներ Նարինե և Ժորժ Գրիգորյանների օրինական ներկայացուցիչներ, գրավադրելու հիպոթեքի պայմանագրով ձեռք բերվող Նոր Հաճն համայնքի Պարգևաշեն 4-րդ թաղամասի 1-ին փողոցի 11/1 հասցեում գտնվող անշարժ գույքի՝ սեփականության իրավունքով երեխաներին պատկանող բաժնեմասերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

08 հունիսի 2021 թ.
Ք. Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 բ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08-ը հունիսի 2021 թ. N 159

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ Պ. ՍԵՎԱԿԻ ԹԱՂԱՄՍԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 4-րդ մասի, Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, 2019 թվականի նոյեմբերի 19-ի՝ 225-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ , Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 04-ի N 1023-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88-Ն և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցած շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Ժորա Ավետիսի Բաբայանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ժորա Ավետիսի Բաբայանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2005 թվականի հունվարի 27-ի N 2185165 վկայական) հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ **Պ. Սևակի թաղամաս, 4-րդ փողոց, թիվ 31 հասցե**:
2. Թույլատրել փոփոխելու Ժորա Ավետիսի Բաբայանին սեփականության իրավունքով պատկանող Նոր Հաճն համայնքի Պ. Սևակի թաղամաս, 4-րդ փողոց, թիվ 31 հասցեի՝ ձևափոխված մառանի գործառական նշանակությունն ու այն օգտագործել որպես ծածկոց:
3. Ժորա Ավետիսի Բաբայանին սեփականության իրավունքով պատկանող Պ. Սևակի թաղամաս, 4-րդ փողոց, թիվ 31 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառուցված 188.1 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 2.82 քառակուսի մետր արտաքին մակերեսով զուգարանը, 8.62 քառակուսի մետր մակերեսով ջրավազանը և 15.69 քառակուսի մետր մակերեսով քարե պարիսպը համարել օրինական:
4. Ժորա Ավետիսի Բաբայանը պարտավոր է ինքնակամ կառուցված 215.23 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությունների օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից վաթսուն օրվա ընթացքում Նոր Հաճնի համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին մուծել 498473 (չորս հարյուր իննսունութ հազար չորս հարյուր յոթանասուներեք) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար **Գ.Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09-ը հունիսի 2021 թ. N 160
Նոր Հաճն

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ 06 ՄԱՅԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 113 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝ ***որոշում եմ.***

1.Նոր Հաճն համայնքի ղեկավարի կողմից տրված 2021 թվականի մայիսի 06-ի թիվ 113 որոշման մեջ նշված «11/3» թվերը փոխարինել «11/4» թվերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար **Գ. Մաթևոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈՒՆԻՍԻ 2021 թվականի N 161

<ՍԱԹԵՆԻԿ > ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԿ –Ի ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին>օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետին 38-րդ հոդվածի 1-ին մասի 7 – րդ կետի պահանջներով՝ *որոշում եմ.*

1.2021 թվականի համայնքի բյուջեի գործառական դասակարգման 01.06.01 <Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)>հատվածի 4819 <Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին> հոդվածից <Սաթենիկ> բարեգործական ՀԿ Աբովյանի մասանճյուղին ցուցաբերել ֆինանսական աջակցություն 70000 (յոթանասուն հազար) դրամի չափով:

2.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բաղալյանին ապահովել ֆինանսավորումը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2021թ. հունիս 09
ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 Հունիսի 2021 թվականի N 162

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի N 59-Ա որոշման, Նոր Հաճն համայնքի ղեկավարի 2019 թվականի մարտի 4-ի N 10 կարգադրության և հիմք ընդունելով Նոր Հաճն համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 08-ի ուսումնասիրության ակտը, ***որոշում եմ.***

1. Նոր Հաճն համայնքում 2021 թվականի տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառել սկսած յուրաքանչյուր ամսվա վճարի 50 տոկոսի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

10-ը հունիս 2021թ
Ք.Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի ղեկավարի 2021 թվականի
հունիսի 10-ի N 162 որոշման

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ

Հ/Հ	ԵՐԵԽԱՅԻ ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	ԿԻՐԱՌՎՈՂ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ %	ԾՆՆԴՅԱՆ ՕՐ, ԱՄԻՍ, ՏԱՐԵԹԻՎ
1	2	3	4
«ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ		
1	Անժելա Պողոսյան	50	10.01.2018

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 163

11-ը հունիսի 2021թ.
Ք. Նոր Հաճն

«ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ՍԱՆԵՐԻՆ ԵՎ ԴԱՍԱՏՈՒՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 46-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով մասնագիտական առաջարկությունը՝ ***որոշում եմ.***

1. «Նոր Հաճնի համայնքապետարանի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի սաների 2020 թվականի և 2021 թվականի առաջին կիսամյակում հանրապետական և միջազգային մրցութ-փառատոններում մրցանակային առաջին տեղեր գրավման , ինչպես նաև նույն դպրոցի դասատուներին անմնացորդ նվիրումով և արդյունավետ աշխատանքի համար 2021 թվականի բյուջեից հատկացնել՝ գործառական դասակարգման 10.7.1 <Սոցիալական հատուկ արտոնություններ> հատվածի տնտեսագիտական դասակարգման 4727 <Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից> հոդվածից 555000 դրամ դրամական պարգևատրում:
2.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բաղալյանին ապահովել ֆինանսավորումը՝ ըստ հաստատված նախահաշվի:
3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի հարցերով առաջատար մասնագետ Հ.Սիմոնյանի վրա:
4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

11-ը հունիսի 2021թ
Ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՒՌՈՒՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 164

11-ը Հունիսի 2021թ.

Ք. Նոր Հաճն

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ N 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԴԱՍՎԱՐ ԳԱԼՅԱ ՀԱՅԿԱԶԻ ՋՈՄԱՐԴՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին>օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 46-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով մասնագիտական առաջարկությունը՝ ***որոշում եմ.***

1. Նոր Հաճն համայնքի N3 հիմնական դպրոցի դասվար Գալյա Ջոմարդյանին կենսաթոշակի անցնելու կապակցությամբ համայնքի 2021 թվականի բյուջեից հատկացնել՝ գործառական դասակարգման 10.7.1 <Սոցիալական հատուկ արտոնություններ> հատվածի տնտեսագիտական դասակարգման 4727 <Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից> հոդվածից 50000 դրամ:
2.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բաղալյանին ապահովել ֆինանսավորումը՝ ըստ հաստատված նախահաշվի:
3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի հարցերով առաջատար մասնագետ Հ.Սիմոնյանի վրա:
4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

11-ը հունիսի 2021թ
Ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11-ը հունիսի 2021 թ. N 165

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 7-ի N 1079-Ն որոշման , 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել փոփոխելու Արթուր Սաշիկի Ավետիսյանին պատկանող Նոր Հաճն համայնքի Տոռոզյան փողոցի թիվ 37/1 հասցեի, 07-006-0005-0136 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.04 հա մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը՝ որպես հասարակական կառուցապատման հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Սաշիկի Ավետիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **Գ. Մաթևոսյան**